«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա ՝ Գրականություն

Մասնակից՝ Մարինե Գալստյան

Ղեկավար ՝ Անահիտ Զոհրաբյան

Թեմա ՝ ««Սասնա Ծռեր» էպոսը միջին և ավագ դպրոցում»

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….…..... 3

ԳԼՈՒԽ I

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԸ ԺԱՄԱՆԱԿԻ

ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ……..….. 4

ԳԼՈՒԽ II

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ…….….7

ԳԼՈՒԽ III

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ, ՎԻՊԱԿԱՆ

ԳԾԵՐԸ……..……...…..10

ԳԼՈՒԽ IV

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ»

ԷՊՈՍՈՒՄ……..……....17

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ……27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ……..29

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……....30

Ներածություն

Ժամանակի գոյընթացը ստիպում է վերարժևորել և վերանայել կենցաղը, աշխարհընկալումը , ապրելակերպը , կրթության նկատմամբ մոտեցումները: Ժամանակակից դպրոցը շատ լուրջ փոփոխությունների կարիք ունի, այդ թվում ՝ նոր կրթական ծրագրեր, նոր թեմաներ, թեմատիկ պլանների և դասագրքերի փոփոխություն:

Սակայն անցյալից ավանդված արժեքներ ունենք, առանց որոնց անհնար է պատկերացնել հայ մարդու, հայ երիտասարդի ու պատանու կրթադաստիարակչական աշխատանքը, որովհետև դրանք այն արժեքներն են, որոնք ուղղակիորեն անքակտելի կապով կապված են հայ մարդու ներկայի, անցյալի ու ապագայի հետ և մեր հայելանման արտացոլումն են;

Այդպիսի ժառանգություններից է մեր գրականության հանճարը ՝ <<Սասնա Ծռեր>> էպոսը, առանց որի անհնար է դպրոցում դասավանդել, դաստիարակել ու կրթել ՝ որպես իսկական հայ:

Սույն ուսումնասիրությունը վերաբերում է մեր էպոսին ՝ մեր ազգի ներկային, անցյալին ու ապագային: Ահա միամիտ, պարզ , բայց հանճարեղ ժողովրդի ստեղծագործության մեջ կարող ես գտնել, թե ով ես դու որպես հայ, ինչպես ես ապրում, ինչ ես մտածում, ինչ ես սիրում ու դեպի ուր ես գնում:

Այս բարդ քաղաքական վիճակում անգամ մենք այս գրքում կարող ենք փնտրել մեր ինչուների պատասխանները և կարդալով ու վերլուծելով այս գիրքը՝ մեր հայ պատանուն կարող ենք ցույց տալ , թե ինչպիսին է հայ կինը ՝ քաջ, սկզբունքային, նվիրված իր ընտանիքին, ինչպիսինն է մեր հերոսը՝ միամիտ, ուղղամիտ , հայրենիքի համար կյանքը տվող, բայց նաև հեշտ խաբվող ու դիվանագիտության հարթակում անհաջող, մեր էպոսի երգիծանքի մեջ պիտի գտնենք մեր ողբերգությունը , թե ինչպես ենք լացի մեջ կյանք գտնում, երգիծում , որ կարողանանք մեր դաժան կյանքի մեջ իմաստ գտնել, հենց մեր էպոսը կսովորեցնի իր պապերի օրհնանքներն ու անեծքները, կենցաղն ու արժեքային համակարգը:

Այս էպոսը հայ գրականության հիմնասյունն է, առանց որի անհնար կլինի դպրոցում տալ ազգային կրթություն ու դաստիարակում:

ԳԼՈՒԽ I

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դանդաղոշ է և խոնարհ՝ իր Սասունցի Դավթի նման և անսպասելի ըմբոստ, հարվածող նրա պես: Երբ վրա է հասնում գերագույն վտանգը, հերոսանում է հանկարծ և ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյի՛ր, և կկողոպտվի, բայց և, առհասարակ, ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամությունը վանում է[1]:

Բանահյուսությունը ժողովրդական բանավոր գեղարվեստական ավանդույթ է, որը, անցնելով մի տեղավայրից մեկ այլ տեղավայր, մի ժամանակաշրջանից մեկ այլ ժամանակաշրջան, մեկ անհատից, մեկ այլ անհատի, ձեռք է բերում տարբերակներ:

Բանահյուսության առանցքային հատկանիշներից մեկն այն է, որ այն ժողովրդական է,այսինքն՝ մեկ անհատի մտքի արդյունք չէ, այլ կոլեկտիվ մտածողության և հոգեբանության ծնունդ. այն ուղղակիորեն կապված է տվյալ երկրի, տվյալ ժողովրդի պատմության, մտածողության հետ:

Հայ բանահյուսության գոհարը << Սասնա Ծռեր>> էպոսն է:

Յուրաքանչյուր ժողովուրդ սովորաբար ունենում է շատ քիչ թվով էպոսներ: Էպոսն այն ժանրն է, որը ազգային է , ի տարբերություն հեքիաթների, որոնք միջազգային են: Հեքիաթային նույն սյուժեները ունեն տարբեր ազգեր, սակայն էպոսը հատուկ է միայն տվյալ ժողովրդին, չնայած որ այստեղ էլ կարող են լինել սյուժեներ, որոնք թափառիկ բնույթ ունեն և կարող են մեկ ազգից մյուսին փոխանցվել :

<<Սասնա Ծռերի>> պատմական նախահիմքը ընդունված է համարել արաբական արշավանքների ժամանակաշրջանը, իսկ բուն պատմական ժամանակաշրջանը ՝ իններորդ դար:

Յուրաքանչյուր ժողովրդի էպոս տվյալ ժողովրդի իդեալների մարմնավորումն է, և այս առումով էպոսի գլխավոր հերոսները ՝ սասնա ծռերը, հայ ժողովրդի իդեալական դյուցազնի մասին պատկերացումներն են մարմնավորում :

[1]Դերենիկ Դեմիճյան, << Հայը >> պատմվածք

<< Սասնա Ծռեր >> էպոսում բոլոր կերպարները օրինաչափ կերպով և անհրաժեշտաբար չափազանցված են, և դրանով իսկ բարձրացված են գեղարվեստական կատարելության աստիճանի : Սա նշանակում է, որ կերպարների հիպերբոլիզմը նրանց կատարելության ցուցանիշներից է, առանց որի չեն կարող լինել էպիկական ամբողջական կերպարներ:

Խոր պատմականություն, ներքին և ուժեղ դինամիզմ ,մեծ ընդհանրացում և որշակի անհատականություն, խոր տիպականություն, մարդկայնություն, կենդանություն և հուզականություն, ազգային ընդգծված բնավորություն և պոետական հիպերբոլիզմ ՝ ահա այն գլխավոր հատկանիշները, որոնք էպոսի կերպարներին դարձնում են իսկական արվեստի կոթողներ և կատարյալ կերպարներ:

<< Սասնա ծռեր >> էպոսն իր արվեստով և կերպարներով ժողովրդային է: Այլ կերպ ասած ՝ նրա կերպարներ Սանասարը և Բաղդասարը , Մհերներն ու Դավիթը , Ձենով Օհանը , Քեռի Թորոսն ու մյուսները ժողովրդային են թե՛ իրենց բարձրարվեստ կերտվածքով, թե՛ ժողովրդական անձնազոհությամբ , իրենց գաղափարներով : Առաջին հերթին Սանասարաի ու Բաղդասարի կերպարներում խտացված հայ ժողովրդի ազգային բնավորության գծերը ՝ հայրենասիրություն, բարություն, առաքինություններ :

Մեծ և փոքր Մհերների ու Դավթի կերպարններում ստանում են նոր իմաստ, որովհետև վերջիններս արտացոլում են հայ ժողովրդի կյանքի տարբեր էտապներ :

Սասունցի Դավիթը << Սասնա Ծռեր >>էպոսի ամենաինքնատիպ կերպարն է: Նա էպոսի 4 ճյուղերի գլխավոր հերոսներին իրար հետ կապող և նրանց հիմնական ինքնությունն անփոփոխ մի կերպար է: Հայ ժողովուրդն առանձնահատուկ ջանասիրությամբ աշխատել է Դավթի կերպարի վրա ՝ այն ամբողջական կերտելու համար: Ժողովուրդը նրան հանդես է բերել աշխատանքում, կռվի դաշտում, աշխատողին ու վերջինիս աշխատանքի արդյունքը պաշտպանելիս , ժողովրդի տարբեր դասակարգերի ներկայացուցիչների հետ ունեցած շփման մեջ , կենցաղում, սիրո, խնդության, զայրույթի և բազմաթիվ այլ վիճակներում :

Սասունցի Դավթի կերպարի քննությունից կարելի է գալ այն եզրահանգման, որ հայ ժողովուրդն իր կերտած այս կերպարում խտացրել, ամբողջացրել է հենց իր բնութագրումը . Դավիթն իր ժողովրդի նման հայրենասեր , համարձակ, առնական, խիզախ է, բայց դրա հետ միաժամանակ շատ զգացմունքային է, երկար – բարակ դատել չի սիրում,

արագ է վճիռ կայացնում, տանում է ամեն մի նեղություն :Սարսափելի կերպով պատժել գիտի թշնամիներին, բայց դրա հետ մեկտեղ վեհանձն է ու ներող : Ատում է թշնամիներին, բայց ստոր միջոցներ երբեք չի գործադրում հաղթանակին հասնելու համար , պաշտպանում է անզորին ու անճարին, մտածում է իր երկրի բարօրության համար , հալածում է ավազակներին , քնքշությամբ սիրում է իր ազգականներին, կնոջը, իր ծառայողներին, հարևաններին : Հայ ժողովրդի նման բարեպաշտ է, եկեղեցասեր : Գիտի կերուխում անել, գինովանալ, բայց երբեք իրեն չի կորցնում:

<< Սասնա Ծռեր >> էպոսի բոլոր կերպարներն առհասարակ օժտված են նահապետականսովորություններով ՝ հարգանք դեպի ծերերը, խոնարհություն, ազնվություն, ավանդապահություն ծեսերի նկատմամբ, հավատարմություն, հյուրասիրություն, պատկառանք և այլն, սրանք մարդկային այն բոլոր արժեքներն են, որով հայը դարեր շարունակ դաստիարակում է իր երեխաներին և հենց սա պիտի լինի ազգային դպրոցի առաջնկկարդ սկզբունքը ՝ տալ հայի ավանդույթները, կենցաղը բարքերը իմաղոց ու ընդունող սերունդ:

ԳԼՈՒԽ II

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ

Սասնա ծռերի և հայ ժողովրդի մտածողության ու բնավորության անմիջական կապը հասկանալու համար նախևառաջ պետք է ուշադրություն դարձնել ժողովրդի կողմից իր հերոսներին տված մականուններին:

<< Սասնա Ծռեր>> էպոսում այս կամ այն հերոսի պատկերվող կյանքի որևէ կողմը ընդգծելու համար կան նրանց բնորոշ մականուններ: Այս էպոսի հիսունից ավել պատումներում լայնորեն գործածված մականունների մեջ ամենից առաջ աչքի են ընկնում հերոսներին բնութագրող մականունները: Դրանց օգնությամբ վիպասանը շատ հաճախ պատկերում է հերոսի արտաքինը :

Հենց էպոսի անունը՝ << Սասնա Ծռեր >>, հետաքրքիր բացատրություն ունի . << ծուռ >> բառում ժողովուրդը ծաղր կամ բացասական իմաստներ չի դրել , պարզապես այսպես բնութագրվել է մեր հերոսների արտասովոր արարքներնը, դրա հետ մեկտեղ քաջագործությունները, երբեմն էլ՝ թույլ կողմերը , օրինակ՝ միամտությունը:

<< Ծուռ >> մականունը էպոսում տարբեր պարագաներում իմաստային նրբերանգներով է հանդես գալիս : Եթե առաջին ճյուղում << ծուռ >> մականվամբ բնութագրվում են հերոսների զանցանքները, ապա էպոսի հետագա ճյուղերում աստիճանաբար մականունը ավելի ու ավելի դրական իմաստ է ձեռք բերում , իսկ էպոսի վերջում ժողովուրդը արդեն երազում է , որ <<ով էլ լինի, միայն սասնա ծռերից լինի>> : Այս մականունը բազմիմաստ է էպոսում: Նրանով բնութագրվում են և՛ էպոսի հերոսների միամտությունը, և՛ ինչ – որ բան ուշ գլխի ընկնելու հատկությունը, և՛ խենթության չափի հասնող համարձակությունը:

<< Ծուռ >> բնորոշումը տրվում է նախևառաջ Բաղդասարին, ով դրական գծերից հետ ունի նաև որոշ թերություններ : Մեծ Միհերին տրվում են <<ամրոց>> , << առյուծ>>, << առյուծաձև >> մականունները, որոնք ոչ միայն ցույց են տալիս նրա արտաքինը՝ բերդի նման հասակ, առյուծի կերպարանք, այլև դրանց հիման վրա արտահայտվում է այն գաղափարը, որ նա իր առյուծաձև ուժով պաշտպանել է հայրենիքը, և ապա երկու կես արել Սասունի մոտ նստած առյուծին և ստացել <<առյուծաձև>> մականունը :

Սասունցի Դավթի համար ևս մի քանի անգամ տրվում է <<ծուռ >> բնորոշումը : Նա այս գնահատականին արժանանում է դեռևս Մսրա քաղաքում : Դավիթը խաղում է

Մելիքի գուրզի հետ: Դավիթը կրում է նաև <<շախկամակեր>> , << պլեճկեր>> մականունները. Պլեճ նշանակում է շաղգամ, շաղգամի մնացորդներ, որ աղքատներն էին հավաքում: Դավիթը << պլեճներ >> էր ուտում, դրա համար էլ ստանում է այդ մականունը: Դավիթն ունի նաև << Դառնիկ որբիկ >> մականունը, այսինքն ՝ << Դառն որբ >>, հայր ու մայր չունեցող , իսկ << թլոր Դավիթ >> մականունը կապված է լեզուն այրելու հետ :

Էպոսի հերոսներից Քեռի Թորոսին տրվում է <<թևավոր Թևաթորոս>> անունը, որն ազդարարում է նրա արագաշարժության մասին :

Էպոսի հերոս Հովհանին տրվում է << ձենով >> մականունը ՝ պայմանավորված նրանով, որ նա իր ժամանակին ազդու ձայն է ունեցել , իսկ էպոսում դա ուղղակի ֆիզիկական հատկանիշ է դառնում :

Ձենով, որ ուղղակի նշանակում է բարձր ձայն ունեցող , փոխաբերական իմաստով շատ ավելի խորը մեկնաբանություն ունի. Օհանի կամ Հովհանի ձայնը Սասնա ծռերի համար սթափեցնող, հաճախ էլ մարտի կոչող նշանակություն ունի:Նրա գործունեության հիմնական զենքը ձայնն է :

Յուրային կերպարներից առանձնանում է Ցռան Վերգոյի մականունը , որը բացի վախից, կապված է նաև ջրի պաշտամունքի հետ, իսկ Չմշկիկ Սուլթանի անունը նշանակում է թագուհի, դշխո : Աստղիկ տրվում է<<ցոլածին >> և << պարոն >>մականունները, որոնք ազդարարում են, որ Աստղիկը պետք է լինի կրակային, ցոլածին իշխող :

Դեղձուն Ծամի մականունը կապված է նրա ՝ քառասուն ճյուղ ծամերի հետ, իսկ Ծովինարի մականունը << ծովյան >> -ից է առաջացել:

Էպոսում բնութագրական ու ժողովրդի մտածողության ու վերջինիս ունեցած վերաբերմունքի բացահայտման հարցում անմիջական կապ ունի թշնամիներին տրված մականունները : Դրանք ծաղրական բնույթ ունեն և ընդգծում են թշնամիների արտաքին այլանդակությունը : Առանձնանում է Կուզբաղինի մականունը , որը պատումներում տարբեր ձևերով է հիծատակվում ՝<< կուզ բախտի >> , << կուզիկ բաղիկ >> և այլն : Շեշտվում է նրա սապատը, որով ժողովուրդը ծաղրաբար ներկայացնում է նրա արտաքին այլանդակությունը :

Բանահյուսության մեջ բացասական հերոսներին հատուկ է խեղված, արատավոր և տգեղ արտաքին ունենալը : Թշնամիների զորքերում հիշատակվում են նաև մի շարք մականուններ, որոնցով ընդգծվում է նրանց նկատմամբ ունեցած բացասական ու ծաղրական վերաբերմունքը՝ Թիակլեզվներ, Բայճակտներ նայլն : Հիշատակվում է նաև Խանդութի դռնապահը՝ Թոփալ Գոգեն և այլն :

ԳԼՈՒԽ III

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ

Էպոսը ծայրից ծար վիպական հյուսվածք է և՛ պատմական, և՛ առասպելական շերտերը էպոսում միահյուսվելով ներկայանում են վիպական քողի ներքո: Մեր էպոսի հերոսները սովորական մարդիկ չեն, այլ՝ դյուցազուններ , այսինքն՝ << աստծո զարմ>>, ինչը հատուկ է բոլոր ազգերի հերոսներին : << Սասնա Ծռեր >> էպոսի վիպական հատկանիշներն առհասարակ բնութագրում են մեր ժողովրդին ու վերջինիս մտածողությունը , բոնական հավատալիքները, ֆետիշիզմը. Սնահավատությունը և այլն:

<< Սասնա Ծռեր >> էպոսում առկա վիպական տարրերից են՝

- շատակերությունը ,
- դյուցազունների արագ աճելը և գերմարդկային հզորությունը,
- ջրից ուժ ստանալը և ընդհանրապես խմելուց անսովոր արագությամբ աճելն ու զորանալը- էպոսի հերոսները հաճախ իրենց սխրագործությունների սկզբում կամ մի հսկայի դեմ կռվելիս ջուր կամ ուրիշ հրաշագործ խմիչքներ են խմում, որից իրենց ուժը կրկնապատկվում է:
- Հրեղեն ձիու առկայությունը - հրեղենները, ինչպես շատ էպոսներում, անասուն չեն, պետք եղած ժամանակ << Աստծու հրամանքով >> նրանք լեզու են առնում, իրենց մասին գանգատվում, քաջալերում իրենց դյուցազուններին : Նրանք նախազգում են վտանգը և իրենց արարքներով նախազգուշացնում տիրոջը :
- Քամու, հավքի և աշուղի բանբերությունը :
- Երազ տեսնելն ու պատգամաբերների միջոցով հաղորդակցվելը,
- Փոխադարձ ծաղրը :

Կանանց կերպարները << Սասնա Ծռեր >> էպոսում

Դեռ հեթանոսական ժամանակներից կինը հայերի մոտ համարվում էր ընտանիքի հիմքը: Դրա վկայությունն են մեզ հասած բանաստեղծական պատառիկները, լեգենդներն ու պատմական վկայությունները: Հայ պատմիչ Ագաթանգեղոսի վկայությամբ՝ նախաքրիստոնեական շրջանում հայ կնոջը վերաբերվել են որպես «մայր աղբյուր», «կենսատու», «շունչ և կյանք»:

<< Սասնա Ծռեր>> էպոսում տղամարդկանցից ոչ պակաս կարևորվում են նաև կանայք: Նրանք իրենց երկրի հարազատ ծնունդներն են, քաջ են, անվախ ու իսկական դյուցազնուհիներ են :

Հետաքրքիրն այնն է, որ էպոսում հայ կանաք մինչև ամուսնանալը բավականին ինքնուրույն են և շատ խստապահանջ ամուսնու ընտրության հարցում : Նրանցից ոմանք նույնիսկ տղամարդկանց հագուստով պայքարում են իրենց ձեռքը խնդրելու եկածների հետ և ընտրում նրան, ով իրենց կհաղթի : Ամուսնությունից հետո նրանք դառնում են հավատարիմ և նվիրված, անգամ այն աստիճան, որ պատրաստ են իրենց անձը զոհելու հանուն ամուսնու :

Վստահաբար կարող են ասել, որ մեր էպոսի յուրաքանչյուր կին իր յուրահատուկ գույնն է տալիս էպոսին ու յուրատեսակ մարմնավորումն է հայ կնոջ և իսկական հայ մոր ;

<< Սասնա Ծռեր >> էպոսում կնոջ ընտրության հարցում կա մի հետաքրքիր ու այսօրվա ժամանակի ու առհասարակ հայ մարդու հետաքրքիր փիլիսոփայություն : Եթե ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա , որ էպոսում կանանց ընտրության հարցում հերոսները առաջնորդվում են Քեռի Թորոսի այն իմաստախոսությամբ, թե միայն հզոր կինը, միայն առյուծը կարող է կորյուն ունենալ, կբացահայտենք հայ մարդու բնավորության ու մտածելակերպի հետաքրքիր շերտեր: Քեռի Թորոսը ասում էր.

- Առյուծն առյուծ է, էղնի էգ թե որձ :

Մեր մտածելակերպն ու բնավորությունը բովանդակող էպոսում հայ կանանց կերպարները քննելը այսօր իհարկե արհեստական չէ, քանի որ այն ամիջականորեն կարող ենք կապել մեր այսօրվա իրադարձությունների հետ, ապատերազմող

Հայաստանում գրեէե յուրաքանչյուր հայ կին կռվող առյուծի տեսակ է, ով լույս աշխարհ է բերում կորյունների է՝ մեր երկրի պահապան զինվորներին :Արցախյան երկու պատերազմներում էլ ազատամարտիկների շարքերը համալրված էր հարյուրավոր հայ կանանցով.«Առյուծն առյուծ է , լինի էգ թե որձ» պատգամը դարձնելով դրոշակ հայ կինը քաջարի մարտիկների հետ միասին զենք վերցրեց և իր հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողակտորը արիությամբ պաշտպանեց :

Էպոսի կանցից կարեի է առաջնահերթ առանձնացնել Դավթի կնոջը ՝ Խանդութին, ով որքան էլ իր ուժի և ամբողջության մեջ գեղեցիկ, նույնքան հզոր է ու կռվող, մինչև Դավթի հետ կռվում հաղթանակ չի տանում, չի համաձայնվում ամուսնանալ վերջինիս հետ :

Կանանցից առանձնանում է ուժեղ, հպարտ , բայց նաև ամուսնուն ու ընտանիքին խոհեմ Դեղձուն Ծամը : Գոհարը ևս քաջ ու հպարտ գեղեցկուհի էր, ով միայանակ, մինչև որդու մեծանալը, տիրություն է անում Սասունին :

Հայ ժողովրդը միշտ էլ ուշադրություն է դարձրել իմաստասիրությանը: Այս առումով կանանց կերպարներից առանձնանում է Արտատեր պառավը, ով իր խորհուրդներով օգնում ու առաջ է մղում Սասունցի Դավթին :

Հայ ժողովուրդը անաչառ է կերպարները կերտելիս : Դրական կերպարների կողքին ստեղծել է նաև անբարոյական ու կրքով լի կնոջ ՝ Սառյեի կերպարը :

Պետք է առանձնացնել նաև Չմշկիկ Սուկթանի կերպարը, ով հանդես է գալիս որպես էպոսում առկա կանանց կերպարների հակադրություն : Սա միակ կինն է, որն իր կյանքն ավարտում է հանուն վրեժի ՝ ջախջախվում է Քուռկիկ Ջալալու ոտքերի տակ :

Այսպես ՝ էպոսում կանայք, ոմանք ՝ քաջությամբ, ոմանք հպարտությամբ, ոմանք խորամանկությամբ ու ճարպկությամբ , հետաքրքիր կերպարներ են և իրենց ուրույն տեղն ունեն մեր ժողովրդական վեպում :

<< Սասնա Ծռեր >> էպոսում կարելի է գտնել հարևան ժողովուրդների հնագույն առասպելների և հավատալիքների տարրեր , որոնց իմացությունը կրկին կարևոր է այսօրվա դպրոցում, որովհետև դարեր հետո էլ մենք նույնն ենք մնացել մեր հավատալիքներով ու պաշտամունքներով:

Սկսած առաջին ճյուղից՝ տեսանելի են հնագույն հավատալիքներ կապված բնության երևույթների, մասնավորապես բնության 4 հիմնական տարերքներից ջրի ու կրակի պաշտամունքը :

- **Ջուր**

1.Սանասար և Բաղդասար երկվորյակները ծնվում են մեկ ու կես բուռ ջրից՝ սրանով իսկ կապվելով ջրի պաշտամունքի հետ :

2.Նրանց մայրը՝ Ծովինարը, կրկին ջրային հնագույն աստվածություն է խորհրդանշում :

3.Ծնվելով ջից՝ հերոսները հետագայում պահպանում են իրենց կապը ջրի հետ ;

4. Սանասարը Քուռկիկ Ջալալի ձիուն և ռազմական պարագաները գտնում է ջրից: Սասունը հիմնվում է մի հզոր գետի կամ առվի ակունքում:

5.Սասունցի Դավիթը կռվից առաջ ուժ է ստանում Կաթնաղբյուրից :

6.Դեղձուն Ծամի ու Սանասարի ամուսնությունից առաջ Սանասարին հանձնարարվում է սպանել ծովի վիշապին և հանել նրա բերանի թանկ քարով մատանին:

- **Կրակ**

1.Սանասարն ու Դավիթը համարվում են ամպրոպային վիշապամարտիկ հերոսներ:

2.Սանաարի կողմից վիշապին սպանելը անմիջական կապված է արևի խորհդանիշի հետ, որովհետև վիշապի բերանի թանկ քարը հենց արևն է խորհրդանշում :

3.Արևի խորհրդանիշ է նաև ոսկե մազերով գեղեցկուհին՝ Քառասուն Դեղձուն Ծամը :

4.Էպոսում Միհրի գլխավոր սխրանքը առյուծին երկու կես անելն է , իսկ առյուծները կամ խոշոր կենդանիները հնագույն հավատալիքներում, հատկապես հնդիրանական պատկերացումով կրակի ու լույսի աստված

5.Միթրա- Միհրի խորհդանիշն է:

Էպոսի երկու կերպարների՝ մեծ ու փոքր Միհրների կերպարների բացահայտումը տանում է Միթրա աստծու հատկանիշների համեմատության :

Միթրան ըստ հնդկական մտածողության՝ հիմնականում ներկայանում է որպես ընկերության, դաշինքի աստված, իսկ իրանական դիցաբանական համակարգում Միթրայի մասին մեզ հիմնական տեղեկություն է հաղորդում Ավեստայի 10-րդ կամ «Միթրա- Միհր» Յաշտը: Ավեստայի ավանդության մեջ էլ Միթրան կրում է պայմանագրային, իրավական գործառույթ: Միթրային ընծայում էին ձիեր՝ որպես արևային աստվածություն: Ինչպես և հնդկական դիցաբանության մեջ, այստեղ էլ Միթրան ապահովում է մարդկանց կայունությունն ու միությունը: Բայց իրանական Միթրան ավելի խիստ է, զգոն է պահում մարդկանց, անողոք է պատժի հարցում: Միթրային խաբելը հավասարազոր է երդմնազանցությանը, և իրեն խաբողին չի ների Միթրան (հմմտ՝ հնդկական դիցաբանության մեջ Միթրան ներող է:

Մեծ Միհրի կերպարում Միհր աստծու հատկանիշները ի հայտ են գալիս հատկապես հետևյալ դրսևորումներով՝

- Մեծ Միհրի առյուծաձև մականունը. Գիտնականները պարզել են, որ առավել առասպելական ծագում է ենթադրում և ստուգաբանվում որպես առյուծի ձև ունեցող : Հնագույն ժայռապատկերներում Միթրա արևի աստվածը պատկերվել է կամ առյուծի տեսքով, կամ էլ՝ առյուծ հեծնած :
- Մեծ Միհրը մեր էպոսի միակ կերպարն է, որը ոչ թե անմիջականորեն պատերազմում է թշնամու դեմ, այլ՝ պայմանագիր կնքում, իսկ ինչպես վերը ասացինք՝ Միթրա աստվածը եղել է դատավոր աստվածություն և ունեցել է պայմանգրեր կնքելու , հովանավորելու գործառույթ :

Փոքր Միհրի կերպարում ավելի ակնառու են Միթրա աստծու հատկանիշները :

- Միթրա Աստվածը ծնվել է ժայռից ու ապրում է ժայռում : Միթրայի հետ է կապվում վերջին դատաստանը , երբ Միթրան կծնվեր երկրորդ անգամ ու բոլոր հանգուցյալները հարություն կառնեին : Փոքր Միհրի հետ ժողովուրդը կապում է նոր աճխարհի ստեղծումը, որը պիտի լինի ավելի ազնիվ :

Համաշխարհային էպոսագիտության մեջ առանձնանում է շումերական դյուցազներգությունը ՝ << Գիլգամեշ >> էպոսը : Ճիշտ է ՝ այս էպոսի հիմքումընկածենինչպեսդիցաբանական, այնպես էլ շումերական կրոնի հավատալիքների հիմքերը և պատմական լեգենդները, այնուամենայնիվ <<Սասնա Ծռեր>> էպոսը թեատիկ ու բովանդակային առումներով աղերսներ ունի այս հին էպոսի հետ:

Նախ նշենք, որ էպոսի գլխավոր հերոս Գիլգամեշի կերպարն առավել հայտնի է կենդանիների հետ ունեցած մենամարտերից: Ավելի ուշ ժողովուրդը նրան ընկալեց իբրև Աստված, ով պաշտպանում էր մարդկանց չար ուժերից և դևերից: Հենց այս հիմնական գիծը տեսնում ենք նաև մեր էպոսում Մեծ Միհրի կերպարում չափահաս դառնալով՝ Միհրը տիրություն է անում երկրին ու ժողովրդին: Հացի ճանապարհը փակող հսկա առյուծի երախը պատռելով՝ երկու կես է անում, որի համար նրան կոչում են Առյուծաձև Միհր:

Դևերի հետ մենամարտելու ու հաղթանակ տանելու գիծը, որը առկա մեր ժողովրդական էպոսում, հանդիպում ենք նաև << Գիլգամեշ>> էպոսում : Գիլգամեշը ճանապահորդության է գնում, որպեսզի սպանի եղանակի չորս դևերին, իսկ օրինակ ՝ Մեծ Միհրը Սպիտակ Դևից ազատում է գեղեցկուհի Արմաղանին ու ամուսնանում նրա հետ :

Կնոջ վրեժխնդրության թեման առկա է երկու էպոսներում էլ. Գիլգամեշն ու իր ընկերը ՝ Էնկիդուն ժճանապարհորդության ժամանակ կռվում ենկատաղիԽումբաբայիդեմ, որըպաշտպանումէրլեռնայինմայրիները (փշոտծառեր), այնուհետևնրանցդեմէդուրսգալիսհրեշայինցուլը, որնուղարկվածէրԻշտարաստվածուհուկողմից: ՆակատաղածէրիրհետսերըկիսելուԳիլգամեշիմերժումից:Խումբաբայիսպանությունը զայրույթէառաջացնումաստվածներիմեջ, որըջարդվումէԷնկիդուիվրա, արդյունքումնամահանում է:

Մեր էպոսում ՝ << Սասնա Ծռերո>> կնոջ վրեժխնդրության թեման արտահայտվում է Չմշկիկ Սուլթանի կերպարով.Դավիթը նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, բայց լսելով Կապուտկողի արքայադուստր Խանդութի գեղեցկության մասին՝ մի շարք քաջագործություններից հետո ամուսնանում է

նրա հետ։ Դրանից հետո մերժված աղջիկը որոշում է վրեժխնդիր լինել ու Դավիթն սպանվում է Չմշկիկ Սուլթանի աղջկա թունավոր նետից։

ԳԼՈՒԽ IV

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

Մեր իրականության մեջ տարբեր երկեր, կապված դրանց երգիծական բնույթի հետ, բազմիցս ուսումնասիրության են ենթարկվել: Սակայն անտեսված ու չուսումնասիրված է մնացել այս առումով հայ ժողովրդական էպոսը: Երգիծանքի ուրույն տեղն ու դերը էպոսում որոշելու համար արվել է միայն մեկ փորձ, որը այնուամենայնիվ բավարար կերպով չի խորացել հարցի էության մեջ: Հետաքրքիր է, որ մեր ազգային էպոսը, լինելով այսքան ուսումնասիրված գրականագետնետրի կողմից, երբեք չի արժանացել երգիծականի տեսանկյունից կատարվող քննության, այնինչ այնտեղ տեղ են գտել ազգային մտածողությանը, սուր մտքին և լեզվին համապատասխանող բազում դրվագներ, որոնք եթե ոչ ողջ հայ գրականության, ապա գոնե բանահյուսական գրականության լավագույն օրինակներից են:

Այժմ փոքր-ինչ խոսենք երգիծանքի, դրա արտահայտման ձևերի, գործածման նպատակների մասին, ապա փորձենք օրինակներով ցույց տալ, թե ինչ գործնական կիրառում են գտել դրանք էպոսում:

Դեռ անտիկ ժամանակներից մարդկանց հետաքրքրել է ծիծաղը, երգիծանքը: Դրանում հնուց տեսել են կյանքի ալաբականական արտացոլումը: Այն եղել է մեղմասական յուրօրինակ ձև՝ խարազանելու ամենայն չարիքն ու անբարոն: Սակայն երգիծանքը չի բավարարվել իր ամենօրյա կիրառությամբ, այն նոր ոլորտներ ու «հորիզոններ է նվաճել», մասնավորապես՝ գրականություն, թատրոն, ֆիլմարտադրության, քանդակագործություն նն: Զարմանալի չէ, գրական-բանահյուսական ամբողջական ժանրեր ստեղծվել են հենց երգիծական միջոցներով: Ի՞նչ է գրականությունը, եթե ոչ մարդկային փոխհարաբերությունները թղթային արտացոլում: Գրականությունը կոչված է մարդուն (ընթերցողին) ծանոթացնել իր նմանի հոգեբանությանը, նրա սխալով սովորեցնել կյանքի ընկալումը: Բայց կյանքը մենք ընկալում ենք տարբեր կերպ: Այդ ընկալումներից մեկն էլ երգիծանքն է (ծիծաղը, հումորը): Այն հասարակական կոնկրետ հանգամանքների վերաբերյալ մարդկային գնահատականի ձև է: Երգիծանքի մյուս կարևոր հատկանիշը դրա սուբյեկտիվությունն է, որ բխում է հենց երգիծողի ընկալումից: Բացարձակերգիծելիոչինչկա: Փաստը,

երևույթերգիծելիենմիայնայնքանով,
որքանովներկայացնողըկկարողանաիմաստավորելդրանք: Նույն երևույթի երկու տարբեր անձ կարող են տարեր գնահատական տալ՝ դրամատիկ կամ երգիծական՝ կախված իրենց սուբյեկտիվ մոտեցումից և աշխարհընկալումից (կարելի է պնդել նաև հակառակը. Ճշտելով, թե տվյալ հեղինակն ինչն է համարում ծիծաղելի՝ մենք ճանաչում և թափանցում ենք նրա աշխարհայացք): Ի վերջո, յուրաքանչյուրը որևէ կենսական իրողությունը ընկալում և արտահայտում է անհատական: Այս մասին ռուս գրականագետ Դ. Նիկոլաևը մասնավորապես գրում է.
«Եթեէպոսումկամդրամայումհեղինակընձգտումէարտացոլմանառավելագույն «օբյեկտիվության», ապասատիրայումակնհայտորենտեսանելիէնրասուբյեկտիվությունը: Գրող-երգիծաբանընչիէլմտածումիրզգացմունքներրթաքցնելումասին: Ընդհակառակը, նաանմիջապեսևմիանգամայնպարզարտահայտումէգաղափարական-զգացմունքային,մերժողականգնահատականարտացոլվողտիպինկատմամբ»[2]: Սակայն այս անհատականությունը բացարձակ չէ: Երգիծողի գլխավոր նպատակն է իր խոսքը ձևակերպել այնպես, որ չնայած այլաբանությանը և հումորին, խոսակիցը (կամ ընթերցողը) ևս այն հասկանա, այլապես, ինչպես ճշմարտացիրորեն նկատել է Վ. Պրոպը, երգիծողը կարող է ընկնել ծանր կացության մեջ. Եթե նա չկարողանա համոզել իր երգիծանքով, ապա ասածը կշրջվի հենց իր դեմ[3]: Այլ կերպ ասած՝ երգիծանքը անհատականության հետ մեկտեղ պետք է նաև համոզիչ լինի:

Մեր ուսումնասիրությանը անցնելուց առաջ հարկ ենք համարում խոսել նաև մի կարևոր հանգամանքի մասին: Ի՞նչ է երգիծանքը, և ի՞նչ է ծիծաղը. Արդյոք մի՞շտ է ծիծաղը երգիծանքի արդյունք: Այս հարցին իր հոդվածում փորձել է պատասխանել Ս. Աղաջանյանը. «Թեևերգիծանքըհաճախ (բայցոչմիշտ) հանգեցնումէծիծաղի, բայցծիծաղիամենդեպքչէ, որերգիծանքիհետևանքէ: Երգիծանքըմարդկայինարժևորման, գնահատմանձևէ»[4]:

Այժմ անդրադառնանք երգիծանքի դրսևորմանը «Սասունցի Դավիթ» էպոսում[5]:

---

[2] Д. Николаев, Смех-оружие сатиры, М., 1962, ст. 38:
[3] В. Пропп. Проблемы комизма и смеха. М., 1976, с. 17:
[4] Ս. Աղաջանյան, Երգիծանքևծիծաղ. նկատառումներ (էլեկտրոնայինտարբերակ):
[5] Օրիակներըհիմնականումքաղելենքհամահավաքբնագրից, սակայնայլպատումներիցլինելուդեպքումմենքդրանքկնշենքհղումներով:

«Սասունցի Դավիթը» այն էպոսներից է, որոնց մեջ մեծ տեղ է տրվում երգիծանքին: Երգիծանքը սաստկության իր տարբեր աստիճաններով ուղեկցում է ողջ էպոսը: Այն հիանալի միջոց է դառնում էպիկական կերպարներ ու իրադարձություններ կերտելիս: Երգիծանքի նուրբ ու տեղին կիրառությունները ոչ միայն խոսքը էպոսում դարձնում են ոճականորեն հարուստ, այլև ամողջացնում են հեղինակ-պատմող-ասացողի վերաբերմունքը: Էպոսում երգիծողը ոչ թե ասացողն է (չնայած երբեմն ասացողն էլ կարող է հավելումներ անել), այլ ժողովուրդը: Սրանով արդեն մենք բնորոշում ենք էպոսի սուբյեկտիվ լինելը: Հետևապես այն ամենը, ինչ ներկայացվում է էպոսում, մեզ համար կարող է ուրախ կամ երգիծական լինել, սակայն նույն կերպ ու նույն խանդավառությամբ չէին ընկալի այն Սասնա հերոսների հակառակորդները: Պարզ է, որ ամենից առաջ և ամենից շատ երգիծվում են հենց «հակառակորդ ուժերը», բայց ասացող-ժողովուրդը հազվադեպ է բացահայտ երգիծում հակառակորդներին. Նա գերադասում է դա անել մեր քաջերի առավելության առաջ նրանց տկարությունը ցուցադրելով: Հիշենք Սասունցի Դավթի ճյուղից այն դրվագը, երբ Սասնա ծուռը խաղում է երեխաների հետ: Էպոսում չի խոսվում այն մասին, թե այդ երեխաները թուլակազմ էին կամ բազկի ուժով տկար, սակայն միայն այն, որ Դավիթը միամտությամբ նրանց իր ուժին հավասար դասելով սկսում է վնասել, կոմիկական իրավիճակ է ստեղծում: Մանուկ Դավթի քաջությունը ստվերում է Մսըրա երեխաներին, սակայն հազվադեպ (մեր դիտարկումներով 2-3 անգամ) հանդիպում ենք բացահայտ ծաղրի հակառակորդների նկատմամբ: Հիշենք Կոզբադինի անհաջող հարկահանությունից հետո նրա Մսըր վերադառնալու դրվագը, երբ Մսրա կանայք սկսում են հեգնել նրա մեծաբերանությունը.

Կնկտիքըն ասին. –Տեսե՛ք մի, տեսեք,

Մեր Կոզբադին ինչպես կը գա լերան-լերան,

Բերնից կը թափե չորթընե թան:

....Այ, Կոզբադին, մեծաբերան...

Սակայն ժողովուրդը օբյեկտիվ է. Նա երգիծում է նաև իր հերոսներին: Գրեթե յուրաքանչյուր Սասնա հերոս գոնե մեկ անգամ երգիծվում է իր միամտության կամ էլ վախկոտության (Վերգո) համար, սակայն ժողովուրդն այստեղ բարեհոգի ծիծաղով է վերաբերվում դրան: «Ծուռ սասուցիները» ևս հայտնվում են կոմիկական տարբեր

իրավիճակներում: Բայց եթե մեր ծռերի դեպքում հումորն ընդգծում է նրանց որևէ դրական հատկանիշը (բացառությամբ Վերգոյի), ապա թշնամու դեպքում հումորը սաստկանում է, երբեմն վերածվում բացահայտ ծաղրի, ինչը հակառակորդին վերջնականապես ոչնչացնելու միտում ունի:

Հետաքրքիր է, որ էպոսում ժողովուրդը փորձել է զերծ մնալ իշխանավորներին, թագավորներին երգիծելուց: Սա միջնադարյան տաբուի հետևանք է, որը, սակայն, ավելի ուշ շրջանի պատումներում ի չիք է դարձել: Բայց չնայած դրան՝ ժողովուրդ-հեղինակը ավելի քիչ է հեգնում պաշտոնյաներին, քան մյուս հերոսներին (սասնա հերոսներին չպետք է համարենք իշխանավոր. Չնայած նրանք Սասունի տերուտիրականն են, այնուամենայնիվ ժողովուրդը նրանց նայում է որպես իրեն հավասարի. «Դավիթն ու մյուս ծռերն ներկայացուցիչներն են այն նույն միջավայրի, որին պատկանում են ոչ միայն Սասնա քաղաքի բնակիչներն էպոսում, այլև ասացողներն ու ունկնդիրները»[6]): Այս ընդհանուր կանոնից շեղում է Մսրա Մելիքը, ում կերպարը նույնքան կենտրոնական ու հավաքական է բոլոր չարագործների մեջ, որքան Դավթինը՝ բոլոր ծռերի մեջ: Եվ հետաքրիր է, որ էպոսում ամենից շատ երգիծվող մեր հերոսը հենց Դավիթն է, իսկ թշնամի ուժերից՝ Մելիքը:

Երգիծանքը էպոսում մի քանի գործնական կիրառություն ու նպատակադրում ունի: Դրանց մենք կանդրադառնանք առանձին-առանձին: Այդ կիրառություններից առաջինը, որը նաև ստեղծում է պատկերավոր խոսք, երգիծական մականունն է: Այս մականունների առաջացումը մի քանի պատճառ ունի 1/Անուններ, որոնք արտաքին ինչ-ինչ հատկանիշ են մատնանշում՝ Թուխմորուս Դավիթ, Թառլան Դավիթ ևն 2/Անուններ, որոնք հերոսների բնավորության գծերից տիպականն են մատնանշում՝ Ձենով Հովան, Ծուռ Դավիթ (Բաղդասար, Մհեր), Չարբահար Քամի (և՛ անունը, և՛ մակնունը երգիծական են), Ցռան Վերգո ևն 3/ Մականուններ, որոնց ծագումը տրվում է ժողովրրդկան որևէ ստուգաբանությամբ՝ Թլոլ Դավիթ, Շաղգամակեր Դավիթ, Խոր Դավիթ: Այս մականուններից յուրաքանչյուրն ունի իր նախապատմությունը, որոնցից յուրաքանչյուրը առանձին մի երգիծական դրվագ է: Այպես. Արտատեր Պառավի արտերում թափառող, նրա ցանքսը փչացնող և միաժամանակ նրա շաղգամներն ուտող Դավթին պառավը Շաղկամակեր մականունն է տալիս: Թլոլ և Խոր մականունները նույն

[6]Ա.Եղիազարյան, «Սասնածռեր» էպոսիպոետիկան, Ե., 2013, 164:

իրադարձության արդյունքն են՝ բերված տաբեր պատումներում: Այսպես պատումներից մեկում Դավթին ոսկով ու կրակով փորձելիս, երբ հրեշտակը Դավթի ձեռքը դեպի կրակն է տանում, Դավիթն այրում է մատը, և տանում է բերանը այրոցը հանդարտեցնելու: Սակայն նա այրում է իր լեզուն, ու այդ օրվանից Թլոլ են սկսում կոչել նրան: Մանուկ Թորոյանի պատումում նույն փորձությանը ենթարկելով և մատը այրելով՝

Գնաց ձեռզարգեցկրագիմեչ,

Կրագկպավ, մատվառավ.

Մատորվառավ, մատզարգեցբերան:

Կրագկպուկէրմատին,

Իդորմռութնէլվառավ

Հարիհընցուցին, մռութվառավ, խռռվավ:

ԷտեխմնացԽորՄանուկիդորանուն» [7]:

Սասնա ծռերի տարբեր պատումներում հանդիպում ենք ամենատարբեր երգիծական իրավիճակների: Սակայն ամենից հաճախ այս երգիծանքը միջոց է ընդգծելու մեր հերոսների միամտությունը, նրանց հոգու մաքրությունը, երբեմն էլ սրանք արդյունք են մանկական չարաճճիությունների: Այսպես. Պատումներից մեկում Ծովինարը փորձում է ապացուցել Խալիֆային, որ նրանից է հղիացել, ասում է.

-Ես քեզնից հըղացիր իմ.

Տու ուժեղ մարդ էր, կըգեր, էն կող կըկայներ՝

Ես քեզնից հըղացիր եմ[8]:

Դեղձուն-Ծամը նամակ է գրում Սանասարին, որտեղ երկու անգամ բարևում է Սանասարին և մեկ անգամ Բաղդասարին: Բաղդասարը սրանից նեղանում է ու կարծում է, թե եղբայրը վաղուց մտադիր էր Դեղձուն-Ծամի հետ ամուսնանալ, սակայն իրեն չէր ասում: Բայց ամեն շատ նա նեղանում է, որ իրեն մի բարև է ուղարկվել, եղբորը՝ երկու.

Ասաց. «Էս ի՛նչ բան է, էրկու դիր՝

Բարև գրե Սանասարին, մեկ դիր՝ ինձի»:

Մի ուրիշ անգամ Սանասարի ու Համտոլի դևի երգիծական զրույցը, ի տարբերություն մյուս դրվագների, ցույց է տալիս Սանասարի հնարամտությունը:

---

[7] «Սասնածռեր. Ընտիր պատումներ», էջ 166:

[8] ՍասնաԾռեր, հատոր Գ. էջ 26:

Համտոլ դև էն դեհեն ձեն էտու, ասաց.

— Դու ո՞վ ես, դուռ բանամ վեր քեզ։

Սանասար ասաց.— Իմ անուն չե՞ս լսե։

Համտու հարցուց.— Քո անուն ի՞նչ է։

Սանասար ասաց.— Դու իմ անուն չես գի՞տի։

Համտոլ ասաց.— Չէ՛, չեմ գիտի։

Սանասար ասաց.— Ես էլ չեմ գիտի,

Թե իմ անուն ինչ է.

Իմ մոր մոտեն լսեր եմ...

Համտոլ հարցուց.— Ի՞նչ ես լսեր։

Սանասար ասաց.— Ինչ եմ լսե՞ր։

Ճիժ էի, իմ մեր ինձ վեր կը թալեր

Ու կասեր՝ Համտոլի գրող։

Համտոլ ասաց.— Որ դու իմ գրողն ես,

Մի քո մատ դռան ճղուն վե տուր դե՛ս...

Պատումներից մեկում, երբ Սասունում սով է, հաց չկա, եղածն էլ թանկացած է, Մհերը հարցնում է հորը՝ Սանասարին.

Թե.-Հորի՞ թանգուտեն կ՛ընկնի։

Հեր լե ըսեց թե.- Առուծ մի փարդա եղի ճամփու վրեն,

Ճամփորդ կտրեց, երթցող-գալացող չկա,

Ըսեց.- Իմա՞լ առուծ. Առուծն ի՞նչ ա, ըսեց։

Ըսեց.-Ջանավար է, մարդ կ՛ուտե։

Ըսեց.-Հեռվա՛նց մարդ կուտե, չէ՞ մոտենաս՝ նոր[9]։

Մի ուրիշ անգամ (ուրիշ պատումում) մենք տեսնում ենք Մհերի և՛ ծռությունը, և՛ միամտությունը։ Նա Գորկիկ իշխանի ախոռում փորձում է իր համար ձի ջոկել, բայց այդպես էլ հարմար ձի չի գտնում։ Վերջում մի փրչոտ քուռակ է տեսնում.

Ըսեց. «Համին ընձի պետքական ձի մի չի կա,

Կայնի գոմփ մի զարկիմ իդա քուռկին,

[9]Սասնա Ծռեր, հ. 2, էջ 58։

Քուռակ լե փիդնա, յելնիմ, էրթամ»[10]:

Ամենից շատ, սակայն, էպոսում Սասնա տան հերոսներից երգիծվում է Դավիթը: Հումորի տեղիք է տալիս ինչպես նրա չիմացությունը, այնպես էլ ուժը: Առայժմ օրինակներ բերենք միայն միամտության դրսևորումից: Մի անգամ, երբ Դավիթը փակված էր սենյակում, նրան հաց տանողը որոշում է չհանել մսի միջի ոսկորը, որպեսզի Դավիթը խեղդվի: Նա էլ միսն ուտելիս, երբ տեսնում է, որ չի կարողանում ոսկորն ուտել, ջղայնությունից ոսկորը նետում է լուսամուտի կողմը, կոտրում է այն: Անցքից արևի շող է նոր ընկնում.

Ասաց.— Էս ի՞նչ ընկավ մեջ սենեկին։
Դավիթ էլավ, ընկա՛վ հետ էդ շողին, ընկավ գետին։
Էլ ետ էլավ, ընկավ հետ էդ շողին, ընկավ գետին։
Էնպե՛ս էլավ, որ քրտինք է՛ս կողմեն,
Էն կողմեն թափավ։
Վարպետ, որ էդոր դաս կը տար,
Դռնով մտավ,
Տեսավ՝ Դավիթ կ՛ էլնի ու կը տփվի գետին.
Ասաց.— Դավիթ, մեռնե՛մ քեզի,
Ինչի՞ էդպես կը տփես դու էդա գետին։
Ասաց.— Էսիկ մտել է իմ սենեկ, չի՛ էլնի դուրս։
Ասաց.— Մեկ աչքերդ խփիր։ Աչքեր խփեց։
վարպետ թաշկինակով բռնեց էն շողի ծակ կալավ,
Շող կտրավ։ Դավիթ ասաց.
— Յա՛, ես էսքան կը չարչարվեմ.
Չե՛մ կարնա դուրս հանի։—
Ասաց.— Ինձնեն զոռբա՞ էիր։
Ինչպե՞ս դու զէն հանեցիր դուրս։
Վարպետն ասաց.— Ղո՛ւրբան, հե՛յրան,
Էնիկ մարդ չէր, էնիկ արևու շո՛ղքն էր։

[10]Նույն տեղում, էջ 265:

Դավիթ ասաց.— Յա, էդ արև որ կա՝
Բա ինչի՞ եք ինձի նստեցուցե էս բանտ։

«Սասնա Ծռեր» էպոսում երգիծանքի կիրառության երրորդ ոլորտը ուժի չափազանցությունն է՝ գրոտեսկը, որը բարեհոգի հումորի ներքին շղթայումով բնութագրում է կերպարներից որևէ մեկին։ Էպոսում գտնում ենք չափազանցության այնպիսի հատվածներ, որոնք վերաբերում են կերարներից մեկի ուժին կամ արտաքին նկարագրությանը։ Ստորև կբերենք մի քանի օրինակ, որտեղ երգիծվում են հենց այդ հատկանիշները։ Այսպես. Դեռ փոքրահասակ Սանասարը մի անգամ խաղի ժամանակ վնասում է խաղընկերներին.

Ճժեր էղան յոթ տարեկան։
Օր մի կխաղային հետ էն մեկէլ ճժերուն.
Սիլա մի զարկեց Սանասար վազրի լաճուն,
Վիզըն ծռվեց, մնաց ծուռ։

Այս տեսարանում մանուկ Սանասարի ուժը ժողովուրդը տալիս է չափազանցության միջոցով, իսկ որպես ապացույց բերում է մի դեպք, որը ընթերցող-ունկնդիրների կողմից ընկալվում է իբրև երգիծանք։ Նման մի տեսարանի ականատես ենք լինում Դավթի մանկության տարիներին։ Այգում խաղացող հասակակիցներին ուրախացնելու համար նա.

Դավիթ բարձր բարդի ծա՛ռ մի բռնեց,
Կորե՛ց, բերեց տակ,
Ինքն բռնեց ծառի կառարեն, ասաց.
-Էկեք, հեծեք, ձի՛ խաղացեք։

Սակայն շուտով այս զբաղմունքից ձանձրացած և ձեռքն «արդեն դադրած» Դավիթը խնդրում է, որ երեխաներն իջնեն, սակայն նրանք անտեսում են նրա խնդրանքը, և «էդ վախտ Դավիթ ծառի կատար էթող։//Տղեկներ թափվան գետին.//Որ մեռավ, որի գլուխ կոտրվավ»։

Արտաքինի չափազանցված պատկերների էպոսում շատ ենք հանդիպում։ Երբեմն այն սպանիչ ծաղր է՝ ուղղված մեկի դեմ, երբեմն էլ կերպարի նկարագրման լավագույն տարբերակ։ Վերևում արդեն խոսել ենք Կոզբադինի՝ անհաջող հարկահանությունից

հետո Մըսր վերադառնալու մասին: Այստեղ ժողովուրդը ջանք չի խնայում (բոլոր պատումներում, որտեղ կա այս դրվագը) նկարագրելու Կոզբադինի այլանդակված արտաքինի: Պատումներից մեկում անգամ Կոզբադինին տեսնում ենք ատամները ճակատին շարած: Սա մի կողմից սարսափեցնում է ընթերցողին, մյուս կողմից՝ հարուցում է նրա ծիծաղը. Չէ՞ որ ի վերջո մեծաբերան Կոզբադինը ստացել է իր համարժեք պատիժը.

Դավիթ լե խերսոտեց, կայնավ...
Կոզբադնի պոկտեր կոտրեց,
Ատամներ լե քաշեց, բվռնեց ճակատ...[11]

Մի ուրիշ դրվագում, երբ Դավիթը հրամայում է Մսրա Մելիքի ծառաներին արթնացնել նրան, նրանք ստիպված են լինում դա անել մի շարք միջոցներով, որոնք ընթերցող-ունկնդիրն իբրև երգիծանք է ընկալում.

Էլան՝ շամփուր կարմրցուցին,
Դրին Մելքի ոտների տակ։
Ասաց.— Օ՛ֆ, աղջիկներ,
Ինչի՞ իմ տեղ լավ չեք շինե.
Լու կա իմ տեղ, ինձ կը խածե։
Ասաց, էլի մնաց քնուկ։
Բերին՝ գութնի խո՛փ մի կարմրցուցին,
Դրին էնոր ոտների տակ։
Ասաց.— Օ՛ֆ, մեջ իմ տեղաց ինչքա՛ն լու կա։
Ինձ կը խածեն, չեն թողնի՝ ես քնեմ։

Այժմ անդրադառնանք էպոսում հանդիպող խոսքի և դրության կոմիզներին: Պետք է նշենք, որ խոսքի կոզմիզմի և դրության կոզմիզմի բացարձակ տարանջատում անցկացնել գրեթե անհանար է: Երգիծանքի ցանկացած տեսակ կապված է խոսքի կոմիզմի հետ: Սակայն մենք կփորձենք տալ օրինակներ, որոնցում երգիծանքը մեծամասամբ հիմնվում է կոնկրետ խոսքի վրա: Ուսումնասիրության սկզբում, երբ խոսում էինք երգիծանքի սուբյեկտիվության մասին, նշեցինք, որ ցանկացած երգիծանք էլ սուբյեկտիվ է և պայմանավորված է ինչպես ժողովուրդ-ասացողի, այնպես էլ

[11]<<Սասնա ծռեր>>, հատ. Ա, էջ 16:

ընթերցող-ունկնդիրի անհատական վերաբերմունքից: Սակայն եթե փորձենք համեմատության մեջ դնել խոսքի և դրության կոմիզմները, ապա պետք է ընգծենք հետևյալը.խոսքի կոմիզմը իր էությամբ բացարձակ սուբյեկտիվ է, այնինչ դրության կոմիզը դրա համեմատությամբ ավելի օբյեկտիվ է: Սա պայմանավորված է նրանով, որ դրության կոմիզմի ժամանակ մեզ ներկայացվում են իրավիճակներ, որոնք մենք, մեր աշխարհընկալումից ելնենլով, կարող ենք համարել երգիծական կամ ոչ: Հարկավ, այս դրվագներում ժողովուրդ-ասացողը երկը հորինելիս իսկապես իր սեփական վերաբերմունքից ելնելով դրանք համարում է երգիծական, սակայն ընթերցող-ունկնդիրը պարտադրված չէ ընկալել դրանք որպես այդպիսին: Այնինչ խոսքի կոմիզմի դեպքում երգիծանքն այնքան ակնհայտ ու շեշտված է լինում, որ գործընթացի մասնակից երկու կողմերն էլ, իրենց կամքից անկախ, ընդունում են ասածի երգիծելի լինելը: Մինչ այժմ մեր բերած բոլոր օրինակները դրության կոմիզմ էին, ուստի ստորև կներկայացնենք միայն խոսքի կոզմիզմի մի քանի օրինակ (վերևում տրված խոսուն անունները նույնպես համարում ենք խոսքի կոմիզմի օրինակներ): Այսպես, առաջին ճյուղում, երբ Սանասարն ու Բաղդասարը փախչում են խալիֆայությունից և փորձում իրենց համար ապաստան գտնել այլ թագավորությունում, Արզրումում նստող ամիրային ասում են իրենց ով լինելը, իսկ վերջինս պատասխանում է.

Մենք էդոնց մեռելներուց կը փախնինք,

Էդոնց կենդանո՛ւն ռաստ կը գանք…

Իրեն դեգերումների հաջորդ կանգառում՝ Մանձկերտի բերդում, նրանք կռվում են Թևաթորոս արքայի զորքի փոխարեն թշնամիների դեմ ապացուցելու համար իրենց նվիրվածությունը: Երբ երկու եղբայրներով գործն ավարտին են հասցնում, զարմացած թագավորն ասում է իր վեզիրին.

Մինչի հիմի էդոնք գիտեին,

Թե մեր մեջ որձ մարդ կա.

Հիմիկս իրենք մարդ են, մենք՝ կնիկ:

Մյուս դրվագում տեսնում ենք Դավթին, ով ստիպված է հեռվից հետևել Մելիքի և մյուսների գուրով խաղին, և ով ձանձրույթից սկսում է բրդյա գլխարկով հողը չափել, բայց քանի որ հաշվել չգիտի, ամեն անգամ ասում է՝ «Էսա՛ մեկ…»

Դավիթ նըստած էնտեղ, հող կը չափեր իր քոլոզով.
Կասեր.— Էսա՛ մե՛կ…
Քանի չափեր, կ’ասեր.— «Էսա՛ մե՛կ…»,
Էլ չէր կարնա ասի «էրկո՛ւ»։

Երգիծական դրվագների մի ամբողջ շղթա է Դավթի հովիվ լինելու ժամանակահատվածը: Առաջին անգամ իրեն վստահած գառներին ու ուլերին աչքաթող անելուց հետո նա ընկնում է նապաստակների ու աղվեսների հետևից՝ դրանց ուլեր կարծելով, և վերջում էլ դժգոհում է, թե ինչու են այդ ուլերը փախչում իրենից.

Ընկավ հետև նապաստակին, էն չալ ուլ էր։
Կուզ, մ’էլ գընաց, աղվե՛ս մ’էլ փախավ,
Դավիթ է՛լ ասաց.
— Օ՛հ, էն ուլեր ինչպե՞ս կը փախնեն։

Այսպիսով. Ուսումնասիրելով «Սասնա ծռերի» խոսքարվեստը երգիծանքի խոշորացույցի ներքո՝ կարող ենք փաստել, որ այն յուրօրինակ աշխարհ է՝ համեմված երգիծանքի տարբեր աստիճաններով: Ժողովուրդը իր հերոսներին կերտելիս չէր կարող հաշվի չառնել մի փաստ. Եթե ուզում ես, որ կերպարը հոգեհարազատ լինի ունկնդիրներին, պետք է նշես նրա և՛ առավելությունները, և՛ թերությունները: Իսկ դրա լավագույն տարբերակը, որի դեպքում մենք չենք հիասթափի հերոսներից, երգիծանքն է, որը մեղմում է վերաբերմունքը, ստիպում ընթերցող-ունկնդրին նայել հերոսներին՝ որպես հավասարը հավասարին:

Արժեհամակարգ

Էպոսի արժեքային համակարգի ամենակարևոր գծերից մեկը մարդասիրությունն է, որի համար էլ մեր էպոսը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվեց լավագույն հումանիստական էպոս: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ խորհուրդը 1964թվականինորոշել էր ընտրել աշխարհի լավագույն էպոսներն ու մի քանիսը հրատարակել տարբեր լեզուներով :
Հայկական էպոսում, եթե նույնիսկ մեջտեղ է գալիս ազգային տարբերությունների հարցը, այն լուծվում է ժողովրդական բարոյականության ոգով:
Մսրա փահլևաններից մեկը նույնիսկ վտանգի պահին մարմնով ծածկում է մանկանը: Հայ բանասացները բարի խոսք չեն խնայել մարդասեր արաբների հասցեին: Հերոսական էպոսը լի է ատելությամբ հայոց հողի թշնամիների նկատմամբ, բայց ոչ արաբների նկատմամբ՝ որպես այդպիսին, որպես ժողովուրդ, ազգ: Հայոց էպոսը ինտերնացիոնալ է և հենց դրա համար է , որ արաբ նվաճողների ու իրենց տունը հողը պաշտպանող հայերի միջև կռիվը էպոսն ի վերջո հանգեցնում է Դավթի ու Մելիքի մենամարտին: Ժողովուրդները չեն ուզում կռվել: Ժողովուրդները իրենց կառավարիչների մեղքով նույնիսկ թշնամություն են անում, ապա երազում են ազատ ու ստեղծագործ կյանքի, աշխարհաշեն աշխատանքի մասին: Էպոսը աշակերտների մոտ ձևավորում է մի շարք կարևոր արժեքներ.

Արդարամտություն- այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:

Աշխատասիրություն- աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Էպոսի հերոսների գերակշռող մասը աշխատասեր է, և իրենց աշխատասիրության շնորհիվ էլ ունենում են հաջողություններ, որն էլ դառնում է խթան սովորողների մոտ աշխատասիրության հանդեպ մեշ սեր ձևավորելուն:

Հավատ- այն ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը- սա այն մղումն է, որ մյուս մարդկանց միավորում է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է, իսկ Դավիթի կերպարով մենք սովորողների մոտ ձևավորում ենք հենց այդ կարևորագույն արժեքը:

Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ: Օրինակ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթությունն այն է, ինչ մնում է դպրոցում սովորածը մոռանալուց հետո » Ալբերտ Էյնշտեյնի այս միտքն էլ կարող ենք ելակետ ընդունել եզրակացությունը գրելու համար: Արժեհամակարգի հիմքում ձևավորված մարդն է քաղաքացին: Կրթության արդյունքում կարևորագույնը մարդու մեջ ձևավորված արժեհամակարգն է: Մեր էպոսը այդ առումով լավագույնն է, եթե այն ճիշտ ու հանգամանորեն է ուսուցանվում: Մեր էպոսը կյանքի մասին է ու փառաբանում է ազատ, հավերժական այդ կյանքը: Մեր էպոսի հերոսակա-նությունն այն է, որ պաշտպանես սեփական օջախդ : Հերոսականի այսպիսի ընդունումը մարդասիրություն է ենթադրում: Պարտություններ շատ ենք կրել, շատ ենք տրորվել, վիրավորել են մեր ազգային արժանապատվությունը: Եվ այսպես կլինի այնքան ժամա-նակ, քանի դեռ Հայաստանը չի դարձել ուժեղ, զարգացած և ժամանակակից երկիր: Այդ հույսն ու հավատը իր մեջ պահում է մատաղ սերունդը: Մեր պատմահոր դասերով արժեհամակարգ ձևավորած ու կրթված սերունդը, մեր էպոսի արժեհամակարգով կրթված ու դաստիարակված սերունդը, ով չի ենթարկվի ամեն տեսակի ազգակործան գայթակղությունների, ով, հակառակ ժամանակի հողմերի ու փոթորիկների, շարու-նակում է արմատները մխրճած պահել այս դժվար, բայց արարչական հողի մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Դերենիկ Դեմիճյան, << Հայը >> պատմվածք
- Ա.Եղիազարյան, «Սասնաձռեր» էպոսիպոետիկան, Ե., 2013
- << Սասնա ծռեր.., հատոր Ա, 1936թ., Երևան
- << Սասնա ծռեր.., հատոր Բ, 1944թ. , Երևան
- << Սասնա ծռեր.., հատոր Գ, 1951թ., Երևան
- Д. Николаев, Смех-оружие сатиры, М., 1962, ст. 38
- В. Пропп. Проблемы комизма и смеха. М., 1976, с. 17
- Ս. Աղաջանյան, Երգիծանք և ծիծաղ. նկատառումներ (էլեկտրոնային տարբերակ)